Diocese of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 30th June 2024 Bulletin 28/2024

Sixth Sunday after Pentecost (Eve of the Fast of Transfiguration)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ11:13-24

Բայց ձեզի՝ հեթանոսներուդ կ'ըսեմ. «Քանի որ հեթանոսներուն առաքեալն եմ՝ կը փառաւորեմ իմ սպասարկութիւնս, յուսալով բարի նախանձը գրգռել իմ մարմինէս եղողներուն, եւ փրկել անոնցմէ ոմանք»: Որովհետեւ եթէ անոնց մեկուսացուիլը աշխարհի հաշտութիւն եղաւ, հապա ի՞նչ պիտի ըլլայ անոնց վերստին ընդունուիլը, եթէ ոչ՝ կեանք մեռելներէն: Ուրեմն՝ եթէ երախայրիքը սուրբ է, նոյնն է նաեւ զանգուածը. ու եթէ արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ:

Եթէ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, ու դո՛ւն՝ որ վայրի ձիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ եւ հաղորդակից եղար անոնց հետ ձիթենիին արմատին ու պարարտութեան, մի՛ պարծենար ճիւղերուն դէմ: Իսկ եթէ պարծենաս, գիտցի՛ր թէ դո՛ւն չես որ կը կրես արմատը, հապա արմա՛տը՝ քեզ: Ուրեմն պիտի ըսես. «Ճիւղերը կտրուեցան՝ որպէսզի ես պատուաստուիմ»: Լա՛ւ. անոնք կտրուեցան անհաւատութեան պատճառով, ու դուն հաստատ մնացած ես հաւատքով: Մեծամիտ մի՛ ըլլար, հապա վախցի՛ր. որովհետեւ եթէ Աստուած չխնայեց բնական ճիւղերուն, գուցէ չխնայէ նաեւ քեզի: Ուրեմն տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ ինկածներուն հանդէպ, իսկ բարութիւն՝ քեզի հանդէպ, եթէ յարատեւես անոր քաղցրութեան մէջ. այլապէս՝ դո՛ւն ալ պիտի կտրուիս: Իսկ անոնք ալ պիտի պատուաստուին՝ եթէ չմնան իրենց անհաւատութեան մէջ, որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել զանոնք: Քանի որ եթէ դուն կտրուեցար այն ձիթենիէն՝ որ բնութեամբ վայրի էր, եւ հակառակ բնութեան՝ պատուաստուեցար լաւ ձիթենիի մը վրայ, ա՛լ ո՞րչափ աւելի ասոնք՝ որ բնական ճիւղերն են, պիտի պատուաստուին իրենց սեփական ձիթենիին վրայ:

The Epistle of St Paul to the Romans 11:13-24 ;

I am talking to you Gentiles. Inasmuch as I am the apostle to the Gentiles, I take pride in my ministry in the hope that I may somehow arouse my own people to envy and save some of them. For if their rejection brought reconciliation to the world, what will their acceptance be but life from the dead? If the part of the dough offered as first fruits is holy, then the whole batch is holy; if the root is holy, so are the branches.

If some of the branches have been broken off, and you, though a wild olive shoot, have been grafted in among the others and now share in the nourishing sap from the olive root, do not consider yourself to be superior to those other branches. If you do, consider this: You do not support the root, but the root supports you. You will say then, "Branches were broken off so that I

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

could be grafted in." Granted. But they were broken off because of unbelief, and you stand by faith. Do not be arrogant, but tremble. For if God did not spare the natural branches, he will not spare you either.

Consider therefore the kindness and sternness of God: sternness to those who fell, but kindness to you, provided that you continue in his kindness. Otherwise, you also will be cut off. And if they do not persist in unbelief, they will be grafted in, for God is able to graft them in again. After all, if you were cut out of an olive tree that is wild by nature, and contrary to nature were grafted into a cultivated olive tree, how much more readily will these, the natural branches, be grafted into their own olive tree!

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 14:13-21

Երբ Յիսուս լսեց, անկէ նաւով մեկնեցաւ ամայի տեղ մը՝ առանձին: Երբ բազմութիւնները լսեցին, ոտքով հետեւեցան անոր՝ իրենց քաղաքներէն: Երբ դուրս ելաւ, տեսնելով մեծ բազմութիւն մը՝ գթաց անոնց վրայ ու բուժեց անոնց հիւանդները:

Իրիկունը՝ իր աշակերտները եկան եւ ըսին. «Հոս ամայի տեղ մըն է, ու ժամանակը արդէն անցած է. արձակէ՛ բազմութիւնը, որպէսզի երթան գիւղերը եւ կերակուր գնեն իրենց»:

Յիսուս ըսաւ անոնց. «Պէտք չկայ որ անոնք երթան, դո՛ւք տուէք անոնց՝ որ ուտեն»:

Անոնք ալ ըսին. «Հոս ուրիշ բան չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ»:

Ըսաւ անոնց. «Հո՛ս՝ ինծի՛ բերէք զանոնք»: Եւ հրամայեց որ բազմութիւնը նստեցնեն խոտին վրայ: Հինգ նկանակներն ու երկու ձուկերը առաւ, դէպի երկինք նայելով՝ օրհնեց, եւ կտրելով նկանակները՝ տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝ բազմութեան: Բոլորը կերան ու կշտացան, եւ վերցնելով աւելցած բեկորները՝ տասներկու կողով լեցուցին: Անոնք որ կերան՝ հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն ու մանուկներէն զատ:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 14:13-21

Jesus Feeds the Five Thousand

fish and loaves

When Jesus heard what had happened, he withdrew by boat privately to a solitary place. Hearing of this, the crowds followed him on foot from the towns. When Jesus landed and saw a large crowd, he had compassion on them and healed their sick.

As evening approached, the disciples came to him and said, "This is a remote place, and it's already getting late. Send the crowds away, so they can go to the villages and buy themselves some food."

Jesus replied, "They do not need to go away. You give them something to eat."

"We have here only five loaves of bread and two fish," they answered.

"Bring them here to me," he said. And he directed the people to sit down on the grass. Taking the five loaves and the two fish and looking up to heaven, he gave thanks and broke the loaves. Then he gave them to the disciples, and the disciples gave them to the people. They all ate and were satisfied, and the disciples picked up twelve basketfuls of broken pieces that were left over. The number of those who ate was about five thousand men, besides women and children.

Announcment:

Dear Parishioners and Armenian Community Members,

Next Sunday is the feast of Transfiguration or (Vartavar), one of five Armenian Church's Tabernacle Days. All those who wish to make a donation on this occasion please approach a member of the Parish council at the door who will be happy to assist you. The council have also provided electronic card reader for your convenience.

Thank you for your generous donation

ՍՈՒՐԲ ՎԿԱՆԵՐ ԳՈՐԴԻՈՍԻ, ՊՈՂԻԿՏՈՍԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Գորդիոսը կեսարացի հարյուրապետ էր, քրիստոնյա ծնողների զավակ: Նա պաշտոնավարում էր կայսեր բանակում Դիոկղետիանոսի օրոք: Ականատես լինելով բազում անօրենությունների՝ նա գնում է անապատ՝ իրեն նվիրելով Աստծուն: Երբ Լիկիանոս կայսրը սկսում է հալածել քրիստոնյաներին, Գորդիոսը գնում է Կեսարիա և հեթանոս բազմությանը խոստովանում, որ ինքը քրիստոնյա է ու սկսում քարոզել Ճշմարտությունը: Նրան ձերբակալում են և ստիպում կուռքերին զոհեր մատուցել: Սակայն սուրբն անդրդվելի էր: Բազում չարչարանքներից հետո նա 320 թվականին ավանդում է հոգին: Քրիստոնյաները հավաքում են նրա ոսկորներն ու պատվով հողին հանձնում:

Պողիկտոսը հայկական Մելիտինե քաղաքի առաջին նահատակն է: Իր ընկերոջ շնորհիվ դարձի է գալիս և ընդունում քրիստոնեություն: Արգելում է կայսերական հրովարտակի ընթերցումը կուռքերի առջև՝ պատռելով այն: Հաստատ մնալով իր հավատքին գլխատվում է՝ արժանանալով երկնային անթառամ պսակին: Նահատակվել է 259 թվականին:

Գրիգորիսը նահատակվել է 549 թվականին Դենշապուհի հալածանքների ժամանակ: Նա ազգությամբ պարսիկ էր, Ռաժիկ ցեղից: Մինչև մկրտությունը կրել է Մանաճիհր անունը: Մժեժ Գնունի հայ մարզպանի օրոք փախչում է Հայաստան, մկրտվում՝ վերանվանվելով Գրիգորիս: Հեռանում է վանք՝ իրեն նվիրելով վանական կյանքին: Երբ Դենշապուհը Հայաստան է գալիս և իմանում, որ Գրիգորիսը նախկինում կրակապաշտ է եղել, պարտադրում է նրան վերադառնալ հին հավատքին: Բայց սուրբը չի ուրանում Քրիստոսին և նահատակվում:

COMMEMORATION OF STS. MARTYRS GORDIOS, POGHIKTOS AND GRIGORIS

Gordios was a Captain from Caesaria. His parents were pious Christians. He served in the Royal Army during the reign of the Emperor Diocletian's. Witnessing many cases of unfairness and injustice, he was isolated and devoted himself to God. When the Emperor Likianus started the persecutions against Christians, Gordios went to Caesaria and confessed to the heathen crowd that he was Christian and started to preach them the Truth. He was imprisoned and forced to offer sacrifice to the idols. But St. Gordios remained unshaken in his faith. After severe torments he passed away in 320 AD. Christians gathered his relics and buried them.

Poghiktos is the first martyr of the Armenian town Melitene. Thanks to his friend he adopted Christianity. He prohibited the reading of the King's Charter before the idols and tore it into pieces. For that deed he was martyred being beheaded. in 259 AD.

Grigoris has been martyred in 549 AD as the result of persecutions of the Persian king Denshapouh. Grigoris was Persian by nationality. Before baptism his name was Manajihr. During the reign of the Armenian Governor Mzhezh Gnouni he left for Armenia and was baptized and received a new name – Grigoris. Afterwards he entered a monastery and began to lead monastic life. When the King Denshapouh came to Armenia and found out that in the past Grigoris had been fire-worshipper, forced him to return to his old faith. But St. Grigoris did not betray Christ and was martyred.

Քրիստոսի 12 առաքյալների և Ս. Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օր

Հիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքյալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետության առաջին տարածողներն էին, հարուցյալ Քրիստոսի վկաները:

«Եվ նա իր մոտ կանչելով տասներկու աշակերտներին՝ նրանց իշխանություն տվեց պիղծ դևերի վրա՝ հանելու դրանք և բժշկելու ամեն ցավ և ամեն հիվանդություն» (Մատթ. 10:1): Պետրոս, Անդրեաս, Հակոբոս, Հովհաննես, Մատթեոս, Բարդուղիմեոս, Փիլիպոս, Թովմաս, Թադեոս, Հակոբոս (Ալփյան), Շմավոն (Կանանացի) և Հուդա առաքյալներն էին նրանք, որոնցից վերջինը եղավ Հիսուսի մատնիչը: Հետագայում 12 առաքյալների շարքում Հուդայի փոխարեն ընտրվեց Մատաթիա առաքյալը: Հավատարիմ Հարուցյալ Հիսուսի վերջին պատգամին, (տես Մատթ. 28:18-19) առաքյալները Հիսուսի պատվիրանները

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

քարոզեցին ու ուսուցանեցին տարբեր ազգերի, «մկրտեցին նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով», այսպիսով դառնալով Քրիստոսի եկեղեցու հիմնադիրները: Քրիստոսի պատվիրանների ամենամեծ քարոզիչներից է Ս. Պողոս առաքյալը, որին քրիստոնյա եկեղեցին ճանաչում է իբրև 13-րդ առաքյալ: Առաքյալների գործունեությանն է նվիրված Աստվածաշնչի «Գործք Առաքելոց»-ը: Ս. Պողոս առաքյալի քարոզչության, անձի ու գործունեության վավերագրեր են նաև Պողոս առաքյալի թղթերը, 14 նամակներն՝ հասցեագրված եկեղեցական համայնքներին ու անհատ քրիստոնյաներին: Հայ Առաքելական Եկեղեցին 12 առաքյալների և 13-րդ առաքյալ ճանաչված Պողոս առաքյալի հիշատակը նշում է միասնաբար Վարդավառից մեկ շաբաթ առաջ, Վարդավառի Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Հայ եկեղեցու տոնացույցում կան նաև առաքյալների հիշատակության առանձին տոներ:

Commemoration of Christ's twelve Apostles and thirteenth Apostle - St. Paul

Twelve Apostles elected by Our Lord Jesus Christ, were Christ's disciples and first preachers of His doctrine, as well as the Incarnate Christ's witnesses.

Jesus called his twelve disciples together and gave them authority to drive out devil spirits and to heal every disease and every sickness." (The Gospel according to Matthew 10:1).

These were the names of the twelve Apostles Simeon (called Peter), Andrew, James, John, Philip, Bartholomew, Thomas, Matthew, James son of Alphaeus, Thaddeus, Simon the Patriot and Judas Iscariot, who betrayed Jesus. Later instead of Judas Iscariot Apostle Matthias was chosen, who was added to the group of eleven apostles.

Remaining faithful to Incarnate Christ's last message the apostles went to all peoples everywhere and preached and taught the Commandments of Jesus, baptized them in the name of the Father, the Son and the Holy Spirit, thus becoming the founders of the Christ's Church. One of the greatest preachers of Christ's commandments is Apostle Paul, who is recognized by the Christian Church as the thirteenth Apostle.

The section of the Bible called "The Acts of the Apostles" is dedicated to the apostles' activity. And there are references on Apostle Paul's preaching, his person and his activity in his 14 letters addressed to the church communities, established by himself, and individual Christians.

Ս. ԿԻՐԱԿՈՍԻ, ՆՐԱ ՄՈՐ՝ ՀՈՒԴԻՏԱՅԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Հուդիտան աստվածասեր ու բարեպաշտ մի կին էր: Նա ուներ երեք տարեկան մի մանուկ, ում անունը Կիրակոս էր: Երբ սկսում են հալածանքները քրիստոնյաների դեմ, նա փախչում է Տարսոն: Սակայն այստեղ էլ չի կարողանում հանգիստ մնալ, քանզի հալածանքները շարունակվում են: Սրբին ձերբակալում են և չարչարանքների ենթարկում: Մանուկ Կիրակոսն արտասվում էր՝ տեսնելով մոր չարչարանքները, բայց հակառակ դատավորի ցույց տված զուրգուրանքների ու փաղաքշանքների, զորանալով ի Քրիստոս ունեցած իր հավատով, կրկնում էր մոր խոսքերը. «Ես քրիստոնյա եմ և Տեր Հիսուսին եմ պաշտում»: Մանուկն ամեն կերպ աշխատում էր ազատվել դատավորի ձեռքից և մոր մոտ գնալ: Նա ուժգին հարվածում է դատավորի ձեռքին, իսկ վերջինս զայրույթից մանկանը նետում է սանդուղքներից: Կիրակոսի գլուխը խփվելով քարին՝ վնասվում է, ու նա հոգին ավանդում է՝ խառնվելով Բեթղեհեմի անմեղ մանուկների խմբին: Իսկ նրա մայր Հուդիտան փառք է տալիս Աստծուն, որ իր որդին նահատակության պսակին արժանացավ՝ չդավաճանելով Հիսուս Փրկչին: Մորը նույնպես ենթարկում են անասելի տանջանքների ու գլխատում: Այս դեպքը տեղի է ունեցել 305 թվականին: Հայ Եկեղեցին Ս. Կիրակոսին պատվել է հատուկ շարականով:

COMMEMORATION OF ST. KIRAKOS AND HIS MOTHER JUDITHAH

Judithah was a God-loving and pious woman. She had a three-year-old son, whose name was Kirakos. When persecutions against the Christians began, she left for Tarson. But she did not live a quiet and peaceful life there as the persecutions were being continued in Tarson, too. The saint

woman was imprisoned and subjected to torments. Little Kirakos, seeing his mother's sufferings cried, but despite the judge's kindness and warm attitude, he was strengthened by his faith towards Christ and all the time repeated his mother's words: "I am Christian and I worship Jesus Christ". The baby tried by all means to get free from the judge's hands and to go to his mother. He struck the judge in the hand and the annoyed judge threw the baby down the stairs. Knocking his head against a stone, the baby died. His mother rendered glory to God that her son was martyred, but did not betray Our Savior Jesus Christ. She was subjected to indescribable torments and finally was beheaded. This event took place in 305 AD The Armenian Church has dedicated a church hymn to St. Kirakos.

Ս. ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԵՑՈՒ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ս. Վահանը Գողթն գավառի Խոսրով նախարարի որդին էր: Մանուկ հասակում արաբների կողմից բազում հայ իշխանների հետ գերի է տարվում Դամասկոս, ուր թլփատվում է՝ վերանվանվելով Վահաբ:

Նա չափազանց խելացի և ուշիմ երեխա էր: Ստանալով պատշաճ կրթություն՝ զանազան պատասխանատու պաշտոններ էր ստանձնել արքունիքում: Չնայած Վահանը մեծացել էր արաբական միջավայրում, բայց գիտեր, որ իր նախնիները եղել են քրիստոնյա, և ինքն իշխանական տնից է: 719 թվականին Հովհաննես Օձնեցի կաթողիկոսն այցելում է Դամասկոսի ամիրապետին, և վերջինս թույլատրում է հայ գերյալներին վերադառնալ հայրենիք: Վահանն էլ, օգտվելով պատեհ առիթից, ցանկություն է հայտնում գնալ և տեսնել հայրենիքը՝ վերադառնալու պայմանով: Հասնելով Հայաստան՝ լսում է ամիրապետի մահվան մասին և վերջնականապես որոշում մնալ հայրենի երկրում: Ամուսնանում է Սյունյաց Բաբկեն իշխանի դստեր հետ և խաղաղությամբ կառավարում իր երկիրը: Սակայն նոր ամիրապետն սկսում է Վահանին որոնել: Վերջինս, որպես ծպտված թափառական, դեգերում է հայրենի երկրում՝ Վրաստանում, լինում բազմաթիվ վանքերում՝ վերջնականապես հաստատվում Սիրիայի Ռուծափ քաղաքում: Բայց մերժելով ամիրապետի կրոնափոխության առաջարկը՝ նահատակվում է 737 թվականին՝ դասվելով երանելի սրբերի շարքը: Սրբի հիշատակության օրը երգում են հատուկ շարական, որի հեղինակը նրա քույր Խոսրովիդուխտն է:

COMMEMORATION OF ST. VAHAN OF GOGHTEN

Vahan of Goghten was the son of Prince Khosrov, the Governor of the province of Goghten. In childhood, together with many other Armenian princes, he was captivated by the Arabs and was taken to Damask, where is circumcised and renamed Vahab.

Vahan was a very clever and skilled young man. Receiving proper education he undertook various responsibilities in the royal court. Despite the fact that he was brought up and educated in Arabic environment, Vahan knew about his ancestors. He hadn't forgotten that he had been Christian and came from a noble family. In 719 AD The Armenian Pontiff Hovhannes of Odzoun paid a visit to the Governor of Damask, and upon his request the Governor allowed the captives to return to their homeland. Taking the opportunity Vahan also expressed wish to visit his homeland and was allowed on condition of returning. Reaching Armenia, Vahan became aware of the Governor's death and took a decision to remain in his homeland. He married the daughter of the Prince Babken, the Governor of Syounik province, and lived there. However, the New Governor of Damask began the searches for Vahan. The latter concealing himself, wandered in his homeland, in Georgia, visited many churches and monasteries and finally stopped in the town Routsap, in Syria. Rejecting the governor's suggestion to change his faith, he was martyred in 737 AD. On the day of the saint's commemoration a special church hymn is sung, the author of which is his sister Khosrovidoukht.

Dear Parishioners and Armenian Community Members: The Sunday collection is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Եթէ երախայրիքը սուրբ է, սուրբ է եւ զանգուածը. Եւ եթէ արմատը սուրբ է, սուրբ են նաեւ ճիւղերը» (Հռոմ. 11:16):

Քրիստոսին հաւատարիմ լինելու ուխտ արած եղբայրներ եւ քոյրեր,

Տիեզերքում ամէն բան կենդանի է եւ շարժուն: Ժամանակի ընթացքում անգամ աստղաբոյլերն են ցրւում, իսկ աստղափոշուց կարող են նոր մոլորակներ ձեւաւորուել: Ժամանակը լուրջ քննութիւն է շատերի համար: Յաւիտենական թուացող շատ երեւոյթներ են անցել՝ չդիմանալով այդ քննութեանը: Կայսրութիւններ եւ քաղաքակրթութիւններ՝ իրենց տիրակալներով եւ քաղաքացիներով, իրենց շքեղ պալատներով եւ բարձրարուեստ կոթողներով: Ժամանակը յաճախ հետքերն էլ է սրբել՝ գրաւոր յիշատակութիւններից բացի ոչինչ չը թողնելով յետոյ եկողներին: Ժամանակի ազդեցութեանը ենթակայ է նաեւ ամէն արարած, որ այս արեւի տակ է ապրում: Հսկայ ծառերը մի փոքրիկ սերմից են առաջանում, յետոյ հասունանում են, փարթամանում, բայց ընթացքում տարեցտարի գննում են դէպի ծերութիւն եւ չորացում: Ժամանակի դէմ նիւթն անզօր է թւում:

Եթէ անգամ հոգու անմահ լինելը յիշենք, որքան էլ մահ չունեցող, բայց ժամանակի մէջ սկիզբ ունեցող գոյութեան մասին ենք խոկում: Բայց կայ Մէկը, որ ժամանակից վեր է, աւելին՝ անժամանակ է: Ժամանակից վեր եւ ժամանակից դուրս կարող է միայն ժամանակն Արարող Աստուած լինել: Միայն է վեր եւ դուրս այդ ժամանակից՝ միաժամանակ ներկայ լինելով եւ շարժելով ամէն բան: Մենք մեր աղօթքները յաճախ աւարտում ենք ***«այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»*** բառերով: Աստծոյ ժամանակային ամենուրեքութեան գեղեցիկ ձեւակերպումն է սա:

Եթէ մի քիչ զգացմունքային դաշտից դուրս նայենք, կտեսնենք, որ մեր պատկերացրած աւարտի, չորացումի, քայքայումի, մահուան ընթացքը միանշանակ չար կամ վատ չէ: Ի վերջոյ, Արարչութեան մասին խօսելիս միշտ շեշտւում է Բարի Աստծոյ սիրուց ու բարի կամքից բխած բարի ստեղծագործութիւնը, ինչպէս Ծննդոց գրքում է. ***«Եւ Աստուած տեսաւ, որ բարի է»***: Տիրոջ նախախնամութիւնը կայ ամբողջ արարչութեան մէջ: Սա է պատճառը, որ երբ ազատ կամքի արդիւնքում, բարին աղճատելու կամ չարի փոխարկելու ընթացք է լինում (հմմտ.՝ ***«Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով» (Իմաստ. 2:24)***, Բարին Աստուած դա կրկին ուղղորդում է բարի արդիւնք ունենալուն:

Անգամ մահը կարող է բարի պտուղներ տալ. Պատահական չէ տարածուած խօսքը՝ ամէն վախճան նոր սկիզբ է:Քրիստոսի բերած օրինակը լաւագոյնն է՝ սերմացու հատիկը պէտք է մահանայ, որ շատ հատիկների ծնուելու պատճառ դառնայ: Այդպէս եւ Ինքը՝ Աստուծորդին, Իր խաչելութեամբ, մահուամբ եւ յարութեամբ դառնում է նոր արարչութեան երախայրիք՝ առաջին պտուղ, Մէկը, Առաջինը՝ որ յաղթել է մահուանը: "Մահ իմացեալը" անմահութիւն է, դա կը լինի ճակատամարտի դաշտում, թէ պարզ առօրեայի մէջ՝ հիւանդութեան կամ ծերութեան մահճում, քանի որ յարուցեալ Յիսուսի մասին իմանալուց, հաւատալուց, մկրտութեան ջրերի մէջ մեռնել-թաղուելուց եւ նոր մարդ դառնալուց յետոյ գործում է ամենուր Քրիստոսին ունենալու հոգեւոր տեսողութիւնը:

«Եթէ երախայրիքը սուրբ է, սուրբ է եւ զանգուածը»: Այդ զանգուածը բոլոր քրիստոնեաներն են, բոլոր նրանք, որոնք Քրիստոսից յետոյ պիտի անցնէին մահուան թունելով: Ամէն հոգի, որ ձգտում է Քրիստոսին հետեւել, Քրիստոսին նմանուել, սրբութեան ճամփայ է անցնում՝ սրբուելով, սրբութիւնը կրելով Քրիստոսով Ս.Պատարագին քահանան նշխարը բարձրացնում է վեր՝ ի տես բոլորի, որ արտայայտումն է «Սրբութիւնը՝ սրբերին» սկզբունքի:

Սուրբ է Քրիստոսի, սուրբ է եւ Եկեղեցին, քանի որ Քրիստոսի խորհրդական մարմինն է: Եկեղեցու մէջ եղողներս պէտքն ունենք մշտական, ամենօրեայ ինքնաքննութեան, որ զղջումով ու խոստովանութեամբ Քրիստոսի առաջ բերենք հոգեւոր, մտային եւ մարմնական աղտոտութիւններն ու պղծութիւնները՝ սրբուելու համար, սրբութեանը վերադառնալու եւ սրբութեան մէջ վերականգնուելու համար: Եւ սա՝ միմիայն Քրիստոսով, Իր ինքնազոհութեան, Իր սուրբ Արեան եւ Մարմնի հաղորդութեան միջոցով:

«Եթէ արմատը սուրբ է, սուրբ են նաեւ ճիւղերը»:

Քրիստոս է փրկութիւնը պարգեւողը, Ինքն է արմատը եւ մենք՝ ճիւղերը: *«Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը: Ով բնակւում է իմ մէջ եւ ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց ինձ ոչինչ անել չէք կարող»(Յովհ. 15:5):*

Մենք մկրտութեամբ չենք զրկւում մեր ազատ կամքից, այլ աւելի իմաստաւոր ենք տեսնում ու ընկալում ազատ կամք ունենալը եւ կամաւորաբար Աստծուն հնազանդուելը: Սակայն մինչեւ վերջ էլ մենք ենք որոշում մեր ընթացքը՝ պտղաբե՞ր կը լինենք, թէ՞ ոչ, կը մնա՞նք իբրեւ ճիւղ, թէ կը կտրուենք: *«Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է: Ամէն ճիւղ, որ իմ վրայ է եւ պտուղ չի տալիս, Նա կտրում է այն. Եւ այն ամէնը, որ պտուղ է տալիս, էտում է, որպէսզի էլ աւելի պտղաբեր լինի» (Յովհ. 15:1-2)*: Իր պէս ազատ է ստեղծել մեզ Աստուած, տուել ազատ ընտրութեան հնարաւորութիւնը, ազատ կամքն ու բանականութիւնը, եւ մենք **պատասխանատու** ենք մեր ընտրութեան համար:

Հրէաներն իրենց ընտրեալ լինելու մէջ դատարկ ու անպտուղ մնացին եւ առաջին լինելուց զրկուեցին, վերջին դարձան: *«Եթէ մէկը իմ վրայ հաստատուած չէ, նա ճիւղի նման դուրս կը նետուի եւ կը չորանայ, եւ այն կը հաւաքեն ու կրակը կը նետեն, եւ կ'այրուի» (Յովհ. 15:6):*

Այժմ շատ են մարդիկ, որոնք քրիստոնեայ ընտանիքներում կամ դպրոցներում ստացել են քրիստոնէական դաստիարակութիւն եւ կրթութիւն, բայց իրենց անձի կայացման շրջանում, երբ ականջն աւելի հակուած է լսելու այլոց կարծիքը, քան ծնողների եւ ուսուցիչների, դադարել են հաւատքի եւ հոգեւորութեան ճանապարհներով քայլել: Իբրեւ Քրիստոսի ետեւից քայլողներ՝ մեր մղումը պիտի լինի այդ մարդկանց եւս յիշեցնել անառակ կնոջը ներող, մաքսաւորին հիւր գնացող, մեղաւորներին ընդունող, ուրացող Պետրոսին վերականգնող եւ ամբողջ յետագայ կեանքերը Իր պէս ապրելու կոչ անող Քրիստոսին, որ ասում է. *«Եթէ իմ մէջ մնաք, եւ մի խօսքերն էլ մնան ձեր մէջ, ինչ որ ուզենաք, խնդրեցէ՛ք Աստծուց, եւ ձեզ կը տրուի» (Յովհ. 15:7):*

Ոչ միայն մկրտութեան սրբութիւնից զրկուած եւ ընկած քրիստոնեաները, այլեւ ցանկացած մէկը Քրիստոսով սրբուելու եւ վերականգնուելու կանչը եւ հնարաւորութիւնն ունի: Այս է ակնարկում նաեւ սուրբ Պօղոս առաքեալը, հրէաների օրինակով ասելով.*«Իսկ նրանք, որ նոյն անհաւատութեան մէջ չեն մնայ, կը պատուաստուեն. Որովհետեւ Աստուած կարո՛ղ է վերստին պատուաստել նրանց» (Հռոմ. 11:23):*

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2024 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

1 July	Romans 11:25-36; Matthew 14:22-36
2 July	Romans 15:1-13; Matthew 15:1-20
3 July	Romans 15:14-29; Matthew 15:21-28
4 July	Romans 15:30-16:16; Matthew 15:29-38
5 July	Romans 16:17-27; Matthew 15:39-16:12
6 July	Commemoration of the Old Ark [of the covenant] and the Feast of the New One the Holy Church Exodus 25:10-14; Joshua 3:14-4:18; 1 Samuel 6:18-7:2; 2 Samuel 6:12-19; Hebrews 9:1-10; Matthew 5:17-20

Բարեկենդան Վարդավառի պահոց

Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթապահքը Հայ Եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նավակատիք է:

Eve of the Fast of Transfiguration

This is the Sunday preceding the week prior to the fasting period preceding the Feast of Our Lord Jesus Christ's Transfiguration called in the Armenian Apostolic Church Fast of Transfiguration lasting from Monday to Friday. Saturday, the last day of the fasting period, is the eve of the feast, which means that that day people can eat fish and dairy products.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Nover Boghosian for the soul of her Husband and Boghosian Sisters and Brothers and their Families, for the soul of their loving Father, Grandfather and Great-grandfather the late **HAMPARTSUM BOGHOSIAN,** on the 7th anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **BOGHOSIAN** and **SOSSIKIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

Hokehankist and in Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.